ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	Արիության մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է: Սկավառակի կենտրոնում պատկերված է հաղթանակի խորհրդանիշը՝ արծիվը և թուրը: Արծիվը տիրաբար տարածված է սկավառակի ողջ մակերեսին, լույսի շողերը թագի նման պարուրում են արծվի գլուխը: Սկավառակի ներքևի մասում կա մակագրություն՝ «ԱՐԻՈՒԹՅՈՒՆ»: Արծիվը, թուրը, լույսի շողերը և մակագրությունը

						ոսկեփայլ են, մնացած դաշտը՝ անփայլ: Սկավառակը պատրաստված է արծաթի հատուկ համաձուլվածքից, արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում, ինչպես նաև անցնում է տեղային ոսկեպատում՝ 999 հարգի ոսկով: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է երկնագույն, մեկ եզրը՝ 24 մմ լայնության ծիրանագույն մետաքսե ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները 39 մմ են, վերևի մասի երկարությունը՝ 27 մմ, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է: Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է: Մեդալի շերտաձողիկը պատրաստվում է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը: Մեդալները պետք է համապատասխանեն «Հայաստանի

					Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նկարագրություններին և նմուշներին, լինեն մաքուր, առանց քերծվածքների կամ այլ հետքերի, դարձերեսի կողմից համարակալված (հերթական համարները կտրամադրվեն) և փաթեթավորված: Միատեսակ մեդալները չպետք է տարբերվեն միմյանցից (չափերի տարբերությունը՝ ոչ ավել քան 0.1 մմ): Վերը նշված քաշերի թույլատրելի շեղումը՝ +/- 2%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					